

Գ. Ն. Գասպարյան

Ո՞Վ Է «ՀՏՈՐ ՄԸ ԱՅՎԱԶՈՎՍԿԻՍԲԱՆՈՒԹՅՈՒՆ»
ՊԱՍՖԼԵՏԻ ՇԵՂԵՆԱԿԸ

Մ. Նալբանդյանի մասին սենատական վճիռը կայանալուց 5 օր առաջ, «Մեղու»-ի հերթական համարներից մեկին որպես հավելված, 1864 թ. դեկտեմբերի 5-ին լույս է տեսել «Կտոր մը այվազովսկիաբանություն» խորագրով անստորագիր պամֆլետը:

Պամֆլետը հանդիսանում է բարձրակետը գաղափարական այն պայքարի, որ ժամանակակից հայ ռևոլյուցիոն-դեմոկրատական թևը, հաջորդական զրոհներով, մղել է ընդհանրապես ռեակցիայի և հատկապես՝ Գ. Այվազովսկու և նրա արբանյակ Խ. Խալֆայանի դեմ՝ հանուն ռևոլյուցիոն-դեմոկրատական ընդհանուր գծի պաշտպանության, հանուն հայ ռևոլյուցիոն-դեմոկրատիզմի առաջնորդի՝ Մ. Նալբանդյանի անձի ու գործի պաշտպանության:

Շնորհիվ այն հանգամանքի, որ հարվածի հիմնական թիրախ հանդիսացող «պիշերադեմ» Գ. Այվազովսկին միաժամանակ, եթե ոչ առաջին հերթին, գործում էր որպես ցարիզմի վարձված ագենտ, հիշյալ պամֆլետը, իր բովանդակությամբն ու տարողությամբը, դուրս էր գալիս անհատ մարդկանց շրջանակներից և տալիս էր իր ժամանակի արևելահայ և արևմտահայ դասակարգային խմբավորումների ու քաղաքական հոսանքների ընդհանուր դիրքորոշումը, միաժամանակ անդրադարձնելով հայ ռևոլյուցիոն-դեմոկրատական թևի վերաբերմունքը՝ հայ ժողովրդի նաև արտաքին թշնամիների, այդ թվում առաջին հերթին ցարիզմի նկատմամբ:

Ուշագրավ այդ պամֆլետի հեղինակային պատկանելիությունը վերջին տարիներին դարձավ պրոբլեմ, որի լուծումն էլ հանդիսանում է մեր սույն հոդվածի հիմնական խնդիրը:

* * *

Մեծավաստակ նալբանդյանագետ Ա. Գ. Հովհաննիսյանը անստորագիր այդ պամֆլետը վերագրել է Միքայել Նալբանդյանի գրչին¹:

Ուշագրավ է, որ պամֆլետը, բոլոր դեպքերում, ընկ. Հովհաննիսյանի կողմից դիտվում է որպես նորահայտ մի փաստ Նալբանդյան-Սվաճյան գրական-քաղաքական համագործակցության: Մյուս կողմից, Սվաճյանի «բացառիկ իրազեկություն», նրա «հատուկ մարտական թափի» և նրա «մտքի պայծառու-

¹ Տե՛ս ՀԱՍՏԻ ԳՈՒ «Տեղեկագիր», 1930, № 7, «Միքայել Նալբանդյանի նորահայտ պամֆլետը», էջ 51—54 և հ.մ.տ. նույնի «Նալբանդյանը և նրա ժամանակը», հատոր 1-ին, էջ 548—550, ինչպես և նույնի «Անտիպ երկեր Միքայել Նալբանդյանի» էջ 364 ի տողատակի հետ: «Տեղեկագիր» նշված համարում տե՛ս և պամֆլետի տեքստի վերահրատարակությունը:

թյան» հանդեպ տարակուսանք ցուցաբերելով՝ ունեցուցիոն-դեմոկրատական գաղափարախոսությունը նրա մոտ «անսպասելի» համարելով հանդերձ, Ռնկ. Հովհաննիսյանը ստիպված է լինում վիճարկության հարց դարձնել պամֆլետի՝ Նալբանդյանին թե՛ Սվաճյանին պատկանելու խնդիրը, ըստ որում, ի վերջո շեշտելով՝ պամֆլետի և՛ «Մեղու»-ի «ներչնչումով» դրված լինելու, և՛ Սվաճյանի կողմից «հավելումների» ենթարկված լինելու կրկնակի հանգամանքները:

Մեր կարծիքով՝ աներկբայորեն՝ պամֆլետը պատկանում է Հարություն Սվաճյանի գրչին:

Ամենից առաջ ուշադրավ է պամֆլետի հրատարակության թվականը: Դուրս գեպքերում, պատահական չէ, որ այն լույս է տեսել հենց այդ օրերին՝ Նալբանդյանի «վերջին դատաստանի» անմիջական նախօրյակին — և «Մեղու»-ի էջերում, քանի որ «Մեղու»-ն հենց սկզբից, ինչպես հայտնի է, հանդես է եկել Նալբանդյանի և՛ անձի, և՛ ծրագրի, և՛ գործունեության ամենաջերմ, հետևողական ու հրապարակային պաշտպանը: Սվաճյանը բազմիցս հայտարարել է, թե այդ պաշտպանությունը ինքն համարում է ա՛մենանվիրական պարտք ու մարտական խնդիր: Իսկ հատկապես Նալբանդյանի կալանավորման առթիվ իր գրած հոդվածում նա հայտնել է, թե ինքը սրտատրուփ սպասում է արդարության ատյանի բացվելուն, և՛ ամբաստանողի, և՛ ամբաստանյալի այնտեղ հրավիրվելուն¹, մինչ այդ, առանց ալլեալի, ցույց տալով իր պատրաստակամությունը՝ հրապարակորեն երդվելու հանուն Նալբանդյանի և ընդդեմ «այդ ազգատյաց չհայերուն»: Բացի այդ, նույն այդ հոդվածում, կար ուղղակի ակնարկություն այն մասին, թե Նալբանդյանը, բանտարկությունից առաջ, սներնդհատ թղթակցության մեջ էր Սվաճյանի հետ և Այվազովսկու ամեն մի արարքի, ինչպես և դրանց նկատմամբ իր մտադրությունների մասին գրում էր նրան ամենայն մանրամասնությամբ, եվ թե, վերջապես, «Մեղու»-ն նախիջևանում ուներ իր հատուկ թղթակիցը, որն ամենայն բարեխղճությամբ հաղորդում էր Սվաճյանին՝ ընդհանրապես արևելահայ իրադարձությունների և հատկապես Նալբանդյանի դրության և ցանկությունների մասին: Ի դեպ, պետք է նկատել և այն ոչ-նվազ ուշագրավ հանգամանքը, որ այլ առիթով ուրիշների և մեր արած ենթադրությունը Սվաճյանի՝ Պետրոպավլովյան բանտում Նալբանդյանին այցելության մասին — ժամանակագրական տեսակետից — համընկնում է պամֆլետի հրատարակության անմիջական նախօրյակին:

Բոլոր այս և նման մոմենտները տարակույս չեն թողնում այն մասին, որ Սվաճյանը, անհրաժեշտության դեպքում, կկարողանար իր տրամադրության տակ ունենալ արևելահայ իրականության, Նալբանդյանի և Այվազովսկու մասին անհրաժեշտ տեղեկությունները և — Նալբանդյանի հետ ուղղակի կամ անուղղակի խորհրդակցությամբ — կարող էր հակազդել այս կամ այն երևույթին, ձևոնարկել այս կամ այն բանը: Ուստի նա տեղյակ կլիներ, որ դեկտեմբերի 10-ին կայանալու էր սրտատրուփ սպասվող արդարության ատյանը: Հարկավոր էր օգտագործել առիթը՝ սենատի վրա ճնշում բանեցնելով Նալբանդյանին փրկելու համար: Դա ոչ միայն բխում էր «մտերմագույն» հոգեհարազատ-

¹ Թե՛ բննարկման ենթարկվող պամֆլետը, ըստ էության, ոչ այլ ինչ էր, քան դատապաշտպանի յուրահատուկ մի ճառ: Այդ երևում է և պամֆլետում Մաշտոցից բերված հետևյալ վերտառությունից. «Բանին դպրութիւնը, կարդին աթոռը, լինին անհղ զատաստանք: Վկայքն պատկին ըստ ճոնութեանցն և մեղաւորքն տանջին ըստ յանցանացն. դատեն զխաչեցողսն և պապակին ուրացողքն ... դժողքն աղաղակէ և սատանայ յառօթ լինի»:

ներ լինելու հանգամանքից, այլև հայ ուղղուցիոն-դեմոկրատական շարժման անհետաձգելի պահանջներից։

Բացի այդ, ինչպես նկատելի է Սվաճյանի նախորդ հոդվածներից մեկից, նա հստակորեն գիտակցում էր ցարիզմի դիվանագիտական հեռանկարները, սրեմտահայերի նկատմամբ։ Նա գիտակցում էր, որ մերձավոր արևելյան իր քաղաքական ծրագիրների իրագործման համար ցարիզմը ամեն կերպ փորձում էր սիրաշահել արևմտահայերին։

Հարկավոր էր մի կողմից ցույց տալ ցարիզմին, թե նախնադյանի հետ էր ամբողջ հայ, այդ թվում և արևմտահայ ժողովուրդը, և դատապարտել նրան կնշանակեր ցարիզմի դեմ զրդուել ամբողջ արևմտահայ ժողովրդական մասսաների ատելութունը, իսկ մյուս կողմից՝ մերկացնել Այվազովսկուն, ցույց տալ, թե նրան ատում էր ամբողջ հայ ժողովուրդը, թե նա, որպես այդպիսին, ո՛չ մի ազդեցութուն չունեի արևմտահայ հատվածի վրա, և թե, սիրաշահելու համար արևմտահայությանը, հարկավոր էր, — և հեշտ — հաշվի չառնել նրա պարտութուններն ու ստերը և ազատ արձակել նախնադյանին։ Նկատելի է, որ չգրգռելու համար սենատին՝ նախնադյանի դեմ, նպատակահարմար էր համարվում ոչ թե խնդրո առարկա դարձնել — կամ ընդգծել — Այվազովսկու ցարիզմի կողմից ապօրեն կերպով նշանակվելու հանգամանքը, և զգացնելու՝ այդ առնչությամբ արևմտահայերի մոտ ցարիզմի նկատմամբ կուտակված ատելութունը, այլ ընդհակառակը, բանն այնպես ցույց տալ, թե իբրև արևմտահայերը նույնիսկ այդ դեպքում հավատում են ցարիզմի բարյացակամ ու արդար վերաբերմունքին և թե, իբրև Այվազովսկին է, որ ցարիզմի նկատմամբ անբարեհույս իր ընթացքով, որպես առհասարակ աննկարագիր ու ապիկար, այնպիսի դիրք է բռնում և այնպիսի զրպարտութուններ անում, որ հաշս հայ ժողովրդի անհարմար դրություն մեջ է դնում իր ծառայած պետությունը, որն եթե շարժվելու լինի նրա ասածով՝ ապա դրանով իսկ խոստովանած կլինի Ռուսաստանի ներսում օրենքի և արդարության չգոյությունը։

Պամֆլետի նշանակությունը ըմբռնելու և նրա հեղինակային պատկանելիությունը պարզելու տեսակետից, կարևոր ենք համարում և այն, որ առաջին անգամ այդ պամֆլետով չէր, որ Սվաճյանը կրակի գիծն էր նետվում ընդդեմ Այվազովսկու՝ ի պաշտպանություն հայ ժողովրդի, նրա ուղղուցիոն դեմոկրատական հոսանքի և դրանց ամենակենտրոնական և սիրելի առաջնորդի՝ նախնադյանի ձգտումների ու շահերի։ Դժվար չէ հասկանալ, որ դեռևս 1860 թ. ապրիլին իր «Մեկ երազը» պատմելիս, «Մեղու»-ն նկատի ուներ առաջին հերթին հենց ճիշդվիտ Այվազովսկուն, երբ գրում էր, — «Մեղու»-ն կդիտե իր մթնոլորտին մեջ սատանա մը, որ ամեն բան կործանելու, ամեն տեղ աղմուկ, հուզմունք, կռիվ սերմանելու կջանա՝ իր մեկ հատիկ նպատակին հասնելու համար։ Իր նպատակն ի՞նչ է. մարդ չգիտե, բայց վնասակար է. — ըլլալու է բան է. — չէ. չպիտի ըլլա. բայց այդ սատանան կկարծե որ ըլլա։

Ո՞վ է այդ սատանան. մարդ չգիտե. վասն զի ինքզինքը մարդու ճանշըցնել չուզելուն համար միշտ մութին մեջ կպտտի. ասի աներևույթ սատանա մըն է։ «Մեղուն» ասի դիտելին ետև, ետևեն կըյնի. երբեմն կգտնե, երբեմն ըրածները կտեսնե, երբեմն ընել տվածները կը գտնե, երբեմն փսփսուքը կը լսե, երբեմն արձագանքը մտիկ կընե։

Ասի կդառնա ետին, իրեն հետամուտ ելող «Մեղու»-ին քըշտ կըսե. «Մեղուն» չերթար. կնայի կեղծավոր երեսով մը, բարև կուտա խնդալով, կուզե բարեկամ

կեղծելով զանի ջնջել: Ասոր համար կերթա մեկ քանի հոգի կգտնե, ու անոնց կխրատե և կհորդորե, որ «Մեղու»-ն սպանեն նե՛ մեծ բարերարություն մը ըրած կոլլան:

Ասոնք ալ մեծ բարերարություն մը ընելու հուսով՝ կփնտրեն այն վարդապետությունը, որ բարերարություն մը ընելու համար մարդասպանությունը մեղի չը համարի. վերջապես կգտնեն, որ սուտ, զրպարտություն, չարախոսություն, մատնություն, մեղի չը համարվի՝ եթե կարծեցյալ բարերարության մը համար ըլլան ասոնք: Սիրտերնին կհանգչի, ու երգում կընեն, կսկսին: «Մեղու»-ին ամեն կողմեն որոգայթներ կլարեն, թակարդներ կդնեն, գութեր կփորեն. «Մեղու»-ն աչքը կբանա, ասոնք կտեսնեն ու զգուշությամբ կսկսի թռչիլ, և այլն:

Իսկ թե ո՛վ էր վերևում մեր կողմից ընդգծված այդ «վարդապետության» կիրառողն ու ի՛նչ նպատակ էր նա հետապնդում դրանով — այդ ևս պարզում է «Մեղու»-ն շատ չանցած՝ տպելով Բ. Աթամանյանի «Գարրիել վարդապետ Այվազովսկի և ազգային խալիբյան վարժարանի թեոդոսիա» խորագրով և «Այն ճշմարտությունը ավելի օգտակար է մեզ, զոր դառն է մեզ լսել» վերտառությամբ հոդվածը, իր 1861 թ. համար 133-ում, «Մեղու»-ն գրում էր.

«...Մեր հանգուցյալ ներսես կաթողիկոսին վերջի տարիները վենետիկոսուրբ Ղազարու վանքի Միաբաններեն երեք կարծեցյալ գիտնական անձինք, Հայր Գարրիել Այվազովսք. Հայր Սարգիս Թեոդոսյան և Հայր Ամբրոսիոս Դալֆայան. ասոնց հարեցավ վերջը և չորրորդը՝ Հայր Խորեն Գալֆայան (ինքչինըր ըրթող, այսինքն բանաստեղծ կանվանե և կգրե) իբր թե Հայոց Ազգին իրավունքները պաշտպանածներնուն համար իրենց վրա հարուցած հավատալիցներուն կողմանե հալածանաց չդիմանալով՝ առ մեզ դարձան ապավինեցան: ...Ո՛չ ապաքեն անոնց դարձը՝ լեզուն և դրությունը խաբեություն է և մեր պարզամտության վրա խնդալ: Բայց կուգա ժամանակ, թեև քիչ մը ուշ, որ ժողովուրդը կիմանա, թե իր ծոցը առած, սիրած և տաքցուցած մարդը օձ էր. որո թույնի մահաբեր վերքերը երկար ժամանակ պիտի չկարենան բուժիլ:

...Վենետիկո Սուրբ Ղազարու վանքի միաբանության ոգին արդեն հայտնի է ու ճիշդվիթության ոգի է և մինչև որ անոր ճիշդվիթական սահմանադրությունը չփոխվի և այժմյան հանգամանացը, այսինքն՝ ազատությանը և ազգությանը համեմատ չըլլա, անոր միաբանները կուգեն իրենք զիրենք հրեշտակ և Սողոմոն լիմաստուն ձևացնեն՝ հավատացող չկա, չկա, չկա»:

Մեջբերած և մեր կողմից ընդգծված այս հատվածներից պարզվում է, որ Սվաճյանը ոչ մի դեպքում չէր հավատում Այվազովսկու և նրա արբանյակների դավանափոխությանը: Նա, Ստեփան Ոսկանի նման — այդ համարում էր մի նոր դիմակ՝ «մարդորսության» ու «մատնության» իրենց «քսու» արարքների համար: Ուստի պատահական չէ, որ պամֆլետում էլ թափանցկորեն ակնարկվում է այդ մոմենտը՝ Այվազովսկուն «մեծարելով» «վերապատվելի» տիտղոսով, որն, ինչպես հայտնի է, մինչև հիմա էլ գործածական է միայն ու միայն կաթոլիկ կամ բողոքական եկեղեցականների համար: Իսկ «Գարրիկ» ծաղրանունը եթե, Ոսկանի օրինակով, կարող էր օգտագործվել ինչև՛ նախնականը այլ առիթներով, ապա Սվաճյանի համար մի՞թե հիմք կա խորթ համարելու, որ իր հերթին օգտվելով և՛ մեկի, և՛ մյուսի ծաղրանունների արսենալից, մի անգամ գործ է ածել այն իր այս պամֆլետում:

Նույն տարւոյն համար 137-ում հրատարակած «Հայոց ու Հունաց եկեղեցիները միացնելու խորհուրդը և Աշխատակիւնի վարդապետին անհրաժեշտ լրուցները» — խորագրով իր հոգւածում առավել ևս մերկացնելով նրա «միջին դարայան խավարամոլութիւնն ու լրբութիւնը», Սվաճյանը նշում է, որ «չարախոս» այդ «զրպարտիչը», «իւր վրայոք գրւած առաջին հոգւածը պարունակող թերթին [իմա՝ «Մեղու»-ին — Գ.Գ.] արդիւն է Ղրիմ մտնելու»:

Մի տարի անց՝ 1862 թ. ապրիլի 20-ի՝ թղթակցութեամբ Սվաճյանը հայտնում էր, որ Աշխատակիւն ոչ միայն արգելել էր «Մեղու»-ի մուտքը իր վիճակից ներս, այլև «նզովեր ու բանագրեր» էր այն՝ «իբրև շարալեզու, թունավոր... լրագիր, վախնալով, որ մի գուցե քրտնաջան «Մեղու»-ն իրեն թափանցիկ հայեցվածովը տեսնէ, դիտէ ու իր ձեռքին տակը եղող ժողովրդայան աչքը բանալով, հրապարակ հանէ այն սոսկալի ոճրագործութիւնները, որ երեք-չորս տարւոյն ի վեր կկատարվին սույն վիճակին մէջ»:

Բայց հակառակ դրան, «Մեղու»-ին խոսքերը, իբրև ճշմարտութեան և արդարութեան պաշտօնէի խոսքերը, արդեն Ռուսաստանի ազգայնոց սրտերուն մէջ ալ արձագանք գտեր էին, վասնզի ճշմարտութիւնն ու արդարութիւնը ամեն տեղ գրկաբաց կրնդունվի: Նույն այդ «նամակ»-ում թղթակիցը առաջարկում է «Մեղու»-ի և իւր վրա վերցնել «սուրբ պարտականութիւն»՝ «այսուհետև իւր աչքերը» դարձնելու նաև ուրիշ տերութեան [իմա՝ առաջին հերթին Ռուսաստանի — Գ. Գ.] տակը գտնվող համարյուն եղբարց վրա»:

Եվ բնորոշ է, որ նույն այդ նամակի տողերով Աշխատակիւն նման «հետախաղաց հոգեկորականներին» Սվաճյանը սպառնում է ուղղակի ապականելով՝ «Ֆիզիկական բնաջնջումով»: «Եվ եթէ մեր ըսածները խորթ և անհավատալի երեւան դաս մը հետախաղաց հոգեկորականաց,— գրում էր Սվաճյանը,— այնպիսիները թող կարգան ֆրանսական հեղափոխութեան պատմութիւնը ու աշխարհուն առջը բերեն իրենց ատենի աստիճանակից եղբարց վիճակը, որ իրենց բռնագրաւ ընթացիցը պատնաւաւ ժողովրդայն ատելութեանն ու կատաղութեանն զոհ եղեր են...» և այլն:

Հետաքրքիր է, որ նույն այդ նամակում «Մեղու»-ն ի գործ էր դնում պամֆլետի այն հիմնական մոտիւլը, որով փորձում էր—ինչպես տեսանք,—ցարիզմի աչքին կասկածելի ու ատելի դարձնել նրա ազենտին՝ որպէս «տիրադրութի», որպէս «հնազանդութիւն» ասելով «մատնութիւն» հասկացողի, և այլն:

Խոսքը մասնավորելով Աշխատակիւն, «այո, չենք վախեր ըսելու,— գրում էր «Մեղու»-ն,— թէ Գաբրիել վարդապետն է անիկա, որ ճշմարտութիւնը ստութեան կամ երևակայեալ բանի մը տեղ ի գործ կդնէ, ազգութեան թշուառութեան տեղ, կրօնադրութիւններ՝ հավատապահականութեան տեղ, տիրապետութիւններ՝ տիրաւորութեան տեղ, մատնութիւններ՝ հնազանդութեան տեղ»:

¹ Ընկ. Աս. Ասատրեանի հետ հակված ենք այդ համակը վերագրել Նալբանդյանի գրչին, միաժամանակ և չբացառելով այն հնարավորութիւնը, որ նույն պատճառարանութիւններով կարող էր և Սվաճյանը դիմել այդ պրիմին, մանավանդ որ, ինչպես տեսանք, այդ օրերին նույնքան զայրույթով լցված էր և՛ ինքը՝ Աշխատակիւնը, և Նալբանդյանից կարող էր քաղած լինել «նամակ»-ի բոլոր փաստական տվյալները: Համեմատելով ինչպէս չենք տարակուսում, որ նույնիսկ Նալբանդյանին պատկանելու դեպքում Սվաճյանը արևմտահայերենի է վերածել լեզուն և իւր կողմից արել դիպուկ դարձվածքների հակալուծներ:

սեղ. հարստահարությունը-ազգաշինության տեղ, և այլն, և այլն,— ու կջանա անոնց հակառակը ցուցնել» և այլն:

«Մեղու»-ի 1862 թ. հունիսի 30-ի համարում «Նոր Նախիջևանի դպրոցին փակվիր» խորագրով իր հոդվածում «Բարեկամի մը նամակին մեկ մասը» մեջբերելուց հետո, Սվաճյանը ավելացնում է. «Ոհ. որչափ մարդիկ մեզ պիտի դատապարտեն իբրև զրպարտիչ՝ եթե ձեռքերնիս շունենայինք Այվազովսկիին առ նույն պաշտոնյայն գրած նամակին օրինակը. եթե այսօր հրիմի և Նախիջևանի մեջ ձեռք ձեռք չպատեր զրպարտության ախտն ու շարիրը երկար հոգվածներով նկարագրող վարդապետին սոսկալի զրպարտությունը երեք անմեղ և րիտասարդներու մասին, ... Երբ լմանա, թե Նախիջևանի մեջ դպրոց ո՞ր բացվելով, արդեն իր դպրոցին մեջ ունեցած թոշակավոր տղոց մեկ մասին բերած հասույթը իր ձեռքեն պիտի երթա, տղայքը հոն երթալու համար իր վարժարանեն ելլելով, ի՛նչ շքեր Գաբրիել վարդապետը, ո՞ր զոհին առջև չկայնիր, մատնություն պետք է, զրպարտություն պետք է, սո՛ւտ պետք է, ատոնք շատ թեթև են Գաբրիել վարդապետին խղճմտանքին համար: Ամեն բան պետք է ընե, որպեսզի այդ դպրոցը խափանվի» և այլն:

Նալբանդյանի ձերբակալությունից մեկ-մեկու կես ամիս առաջ «Մեղու»-ի էջերում Սվաճյանի կողմից հրատարակված այս հոդվածից ինքնաբերաբար պարզվում է, որ մեր քննարկած նախկին նամակում հայտնված ցանկության համաձայն, Նալբանդյանի կալանքից առաջ իսկ Սվաճյանի «Մեղու»-ն համարվում էր «թափանցիկ հայելով», «սուր խայթոցով» և «ազդու գրչով» այն լրագիրը, որ ոչ միայն կոչված էր «նախախնամական դեր» խաղալու նաև արևելահայ հատվածի ներսում, այլև, հակառակ ռեակցիայի կողմից իբրև «չարալեզու թունավոր լրագիր» պաշտոնապես արգելված և բանադրված լինելուն, իրոք էլ խաղում էր իրեն վստահված այդ դերը՝ թեկուզ արևմտահայ հատվածի ներսում և ցարիզմի աչքին մերկացնելով գիշերադեմ Այվազովսկու «լրբությունները»՝ իր բազմահազար ընթերցողների «աչքը բանալով» «սոսկալի այն ոճրագործությունների» վրա, որոնք «երեք-չորս տարվրեն ի վեր» կատարվում էին նրա «լիճակում» և որոնց գոնե մեծ մասը ... տակավին անոր առաջնորդին եղեռնական վերարկուն տակը ծածկված ու պահված մնացեր էին»։ Պարզվում է, որ «Մեղու»-ն «իբրև ճշմարտության և արդարության պաշտոնի լրագիր»՝ դեռևս Նալբանդյանի ձերբակալությունից առաջ իսկ «գրկաբաց ընդունվում» և «արձագանքում էր նաև Ռուսաստանի ազգայնոց սրտերուն մեջ»։ Ուստի պատահական չէ, որ «Մեղու»-ն էր, որ հետագայում առավել անհրաժեշտ պահանջի բերումով, Նալբանդյանի՝ «արդարագատության ատյան» կանչվելու առնչությամբ, շարունակում էր արծարծել պայքարը՝ արևելահայ հատվածի ներսում ռեակցիայի սանձարձակությունների դեմ, մանավանդ, որ տվյալ դեպքում՝ Նալբանդյանի և Այվազովսկու փոխհարաբերության հարցը օրգանապես կապված էր ողջ հայության հետ, Նալբանդյանի և իր ղեկավարած ռեուլյուցիոն դեմոկրատական ամբողջ վարքագծի վտանգված բախտի հետ: Ավելին՝ տարակույս չկա, որ այդ հարցը անմիջականորեն առնչվում էր նաև իր՝ Սվաճյանի անձի հետ, քանի որ, ինչպես նկատեցինք, պամֆլետի հեղինակը սաստիկ զայրանում էր նաև Այվազովսկու այն առաջարկության վրա, որով Նալբանդյանի համախոհներին օրինակ տալու համար՝ Սիվերսից պահանջում էր ամենախիստ պատիժ սահմանել Նալբանդյանին:

Դեռևս Նալբանդյանի կալանքից էլ առաջ, «բարեկամի», «թղթակցի» կամ բոլորովին անհայտ երևույթների տակ՝ ուղղակի փոխադարձ շփումների առիթներով — Նալբանդյանն ու նրա արևելահայ համախոհները Սվաճյանին էին հասցնում ընդհանրապես արևելահայ հատվածի ներսում կատարվող նշանապարհ բոլոր անցուղարձերը, և հատկապես Այվազովսկու հետ կապված բոլոր մանրամասնությունները։ Այդ տեսակետից, հասկանալի է, որ արևելահայ իրականության և հատկապես Այվազովսկու վիճակի անցուղարձերի մասին «բացառիկ իրազեկությունը» չի կարող համոզեցուցիչ հիմք ծառայել պնդելու, որ Սվաճյանը չէր կարող լինել այդ պամֆլետի հեղինակը։ Մանավանդ, որ, ինչպես պամֆլետի առաջին իսկ պարբերությունից պարզվում է, հեղինակի «իրազեկությունը» այն տեսակ «պատահարների» և «անհերքելի իրողությանց վրայոք» է, որոնք բացառաբար վերաբերում են Նալբանդյանի բանտարկության ժամանակաշրջանից ընտո 1863-ին Այվազովսկու էջմիածին կանչվելուց և ետ «ճամբվելուց» ընտո ընկած ժամանակաշրջանին։ Հասկանալի է, որ Նալբանդյանի ազատագրության հարցը իրեն համար կենաց-մահու հարց դարձրած, ընդորոմ և «Ռուսաստանի հորիզոնին վրա» երևցող, բազմաթիվ փորձված արևելահայ «բարեկամների» և «թղթակիցների» հետ անմիջական թե անուղղակի — բայց բոլոր դեպքերում կոնսպիրատիվ-կապերի մեջ գտնվող Սվաճյանը շատ ավելի հեշտությամբ կարող էր «իրազեկ» դառնալ թեկուզ արևելահայ հատվածի ներսում կատարվող իրադարձություններին, քան Պետրոպոլիսյան ցարական ժանդարմների անմիջական հսկողության տակ հազիվ մեկ երկու հարազատի տեսնելու «շնորհին» արժանացած և իր ամեն մեկ տողը եռակի ցենզուրաներից անցկացնելու դատապարտված Միքայել Նալբանդյանը։ Ուրիշ բանի մասին չի վկայում նույնիսկ Նալբանդյանի «Ազգային թշվառություն»-ը, որ, եթե ընդունենք հենց ընկ. Ա. Հովհաննիսյանի տված բացատրությունը, չէր կարող գրված լինել առանց Սվաճյանի կամ նրա «Մեղու»-ի ուղղակի «ներշնչմանը»։ Այդ տեսակետից խիստ ուշագրավ է և այն, որ Նալբանդյանի ձերբակալությունից մեկ-մեկուկես ամիս առաջ իսկ «բարեկամները» Սվաճյանի ձեռքն էին հասցրել մի այնպիսի փաստաթուղթ, որպիսին Այվազովսկու կողմից «ցարական ուսումնական տեսչության» հղված խիստ զաղտնի նամակի պատճենն էր, և որի բովանդակությունը օգտագործում է Սվաճյանը ճիշտ դիրքորոշվելու, հարվածը ճիշտ իր նպատակին հասցնելու և դրանով իսկ մերկացնելու համար մատնիչի և «ամբաստանողի» էությունը։

Հավանաբար նույն այդ բարեկամները Սվաճյանի ձեռքն էին հասցրել և այն «ամբաստանագիրը», որն Այվազովսկու կողմից զաղտնի կերպով ուղարկված էր եղել՝ «ցարական ներքին գործոց նախարարության մեջ այլակրոն ազդուց հոգևոր գործերուն կառավարիչ» — Սվաճյանի սատիրայով՝ Այվազովսկու «արարիչ» — Կոմս Սիվերսին։ Ավելին. այն հայտարարությունը, որ Մեչուխեյան պամֆլետի իսկ տողերի մեջ անում է՝ այդ դանոսի մեկ պատճենը ֆրանսերեն լեզվով իր մոտ ունենալու մասին, կասկած չի թողնում, որ նա ոչ միայն իրոք ունեցել է այն իր ձեռքի տակ, այլև իր պամֆլետը ամբողջությամբ ուղղել է դրա հիմնական տվյալների բացասմանը։ Իսկ այս փաստը մեզ հետաքրքրող հարցի տեսակետից ունի առնվազն երկու կարևոր նշանակություն։ Նախ այն, որ ի՛նչ գործ ունենա այդ պատճենը նրա մոտ, եթե նա իրոք չէր ձգտում այն ունենալ իր տրամադրության տակ, եթե նա չէր որոշել ոչնչացնող քննադատության ենթարկել այն, և դրանով իսկ այն օգտագործել «ամբաստանյալի» պաշտ-

պանության համար՝ Ի դեպ՝ ընկ. Ա. Հովհաննիսյանն էլ տարակուսանք չի հայտնում Սվաճյանի մոտ պատճենի գոյության մասին. միայն նա առարկում է Սվաճյանի գրելու «շնորհի» և «թափի» մասին և փաստորեն պնդում է, որ այդ պատճենը ունենալով հանդերձ նա չէր կարող գրել նման մի պամֆլետ, քանի որ, իբր իրեն հարազատ չէր այդ պամֆլետի ռևոլյուցիոն-դեմոկրատիզմը և այլն: Սվաճյանի բազմաթիվ ակնարկությունների համաձայն՝ «Մեռու»-ում հրատարակված բոլոր անստորագիր հոդվածները պատկանում են իրեն՝ թերթի խմբագրին՝ Հ. Սվաճյանի գրչին: Մյուս կողմից՝ Սվաճյանն ուներ ստորագրելու յուրահատուկ մի եղանակ, ըստորում, «Մեղու»-ում հրատարակած բոլոր Մեչուխեչայական պամֆլետներում, մի տեղ, այդ լինի անհրաժեշտ թե պատահական, հիշատակում էր «Մեչուխեչա» անունը և դրանով իսկ ստորագրում հոդվածի ո՛չ թե տակը, այլ մեջը: «Մեռու»-ում չկա մեչուխեչայական որևէ սատիրայի նմուշ, որ բացառություն կազմի այս օրինաչափությունից: Պամֆլետի մեր նկատած և նկատելիք մյուս հանգամանքներն էլ չլինեին՝ միայն այն փաստի պատճառով, որ դրա մեջ Մեչուխեչան, ըստ սովորականին, իրեն հանդես է բերում որպես գլխավոր հերոս — մեզ իրավունք չէր թողնի ամենադուրյն տարակուսանքն իսկ հայտնելու դրա հեղինակային պատկանելիության նկատմամբ:

Եվ վերջապես, խիստ ուշագրավ է և այն մոմենտը, որ Նալբանդյանի կալանքից մեկ-մեկուկես ամիս առաջ գրած իր այդ հոդվածում, Սվաճյանը, բացարձակ նույնությամբ նախագծել է իր այն տակտիկական մանևրը, ըստ որում, ինչպես նկատել ենք վերևում, իր պամֆլետում «ամբաստանյալ» Նալբանդյանի շքմեղանքը որոնելու էր ոչ թե ցարական սենատի օրենքից կամ ողորմածությունից, քանի որ Նալբանդյանը իբր ոչնչով չէր մեղանշել նրա դեմ, այլ «ամբաստանող» Այվազովսկու՝ իրեն վստահված պաշտոնը շարաշահելու, նրա անարժանության, նրա գծուծ լինելու փաստի մեջ: Այլ կերպ ասած՝ դա, ցարիզմի դիվանագիտական հեռանկարները կշեռքի մի նժարի և Նալբանդյանի հանցանքը — բացահայտվելու դեպքում — մյուս նժարի մեջ դնելու մաներն էր:

«Այդ երիտասարդներուն մտածմանց կերպը ահարկու էր, ուրեմն, — հեղանանքով խոսում էր Սվաճյանը՝ իր պամֆլետի հեռավոր այդ նախերգանքում, — և Գաբրիել վարդապետը արժան չէր տեսեր, որ անոնք ռուսաց հողին վրա դրաբոցական դասատվության պաշտոն վարեն — ի՞նչ սփանշելի հավատաբամություն առ տիրող իշխանությունը»: Եվ վերջում՝ «Բոլոր Ղրիմի, Բեսարաբիո, Նախիչևանի մեջ ճանչեցին՝ զինքը և չէինք հուսար, որ ա՛լ այսուհետև ողջույն քիզ ըսեն ատոր այն տեղերուն ազգայինները: Արդեն լսածնուս նայելու՝ ամեն մարդ վայրացած է և Գաբրիել վարդապետին խիստ ուխտի ըլլա այսուհետև ժողովրդիցան հառաջդիմության խթանին դեմ աքացել. կա՛մ պիտի երթա ուր որ ժողովուրդը կուզե երթալ, կամ պիտի ըյնի ճամբուն վրա ժողովրդին ոտքին ներքև»:

Պատահականություն է արդյոք, որ Սվաճյանի այս արտահայտությունները ուղղակի համընկնում են քննարկվող պամֆլետի ընդհանուր տակտիկայի հետ, և որպես հիմնական լեյտմոտիվ՝ կրկնվում նրանում:

¹ Ի դեպ՝ հարգելի դիտնական Ա. Հովհաննիսյանը այս բառի տվյալ ձևը բերում է որպես լեզվական փաստ այն մասին, թե եթե պամֆլետի հեղինակը արևելահայ հղած չլիներ չափսը է բաց թողներ բառ այս ձևը և դրա փոխարեն ասած պետք է լիներ ճանչցան: Ահա մեկը բազմաթիվ այն փաստերից, երբ Սվաճյանը նույնպես օգտագործում էր — և համարյա միշտ օգտագործում էր — տվյալ բայի այս ձևը: Այսպես կարելի է օրինակներ մի շարք բերել նաև լեզվական մյուս փաստարկումների դեմ:

Պամֆլետի տվյալների համաձայն, Սվաճյանի տակտիկական մաների մի կողմը եթե հանդիսանում էր Այվազովսկու ոչնչացումը — նվազագույն դեպքում չեզոքացումը — ապա մյուս կողմը հանդիսանում էր Նալբանդյանի մեծարումը, նրա փրկությունը:

Այդ տակտիկական մաների առաջին կողմը, ինչպես տեսանք, հանրագումար բյուրեղացումն էր բոլոր այն հողավածների, որոնցով, դեռևս Նալբանդյանի հետ հանդիպելուց էլ առաջ, Սվաճյանը սկսել ու շարունակել էր գրոհել Չամուռճյանի և տվյալ դեպքում առանձնապես Այվազովսկու դեմ:

Տարբեր չէ պարագան նաև երկրորդ կողմի համար:

Հատկապես Նալբանդյանի կալանավորման առթիվ գրած իր հողավածում, Սվաճյանը նախօրոք հավաստիացնում էր բոլորին, թե նա անմեղ է և թվում էր «չնաշխարհիկ» այդ մարդու բոլոր արժանիքները: Այդ գիծը նա շարունակեց նաև դրանից հետո: Այդ տեսակետից հատկապես ուշագրավ է «Մեղու»-ի 1863 թ. ապրիլի 30-ի «Ամեն Արիստաքոս ունի յուր Զոյիլոս» խորագրով հողավածը, ուր միաժամանակ արտահայտություն են գտել պամֆլետին հատուկ տակտիկական մաների և՛ մեկ, և՛ մյուս կողմերը: Մեջ ենք բերում երկու բնորոշ հատված:

«Դեռ այս տարի այն սևադեմ Ատրոպեն՝ այն կույր տգիտությունը լրբաբար հաբձակեցավ այն լուսատու ջահին՝ Մ. Նալբանդյանցին վրա և մահաբույր բույներ ժաթֆելով՝ զանի ի չիֆ դարձուցանել ջանաց, զանի սև զրպարտություններով խավաբասեր և մարդախոշոշ բռնության մատնեց, ուր այն վսեմ զրիշը լուության դատապարտեցավ ամիսներով ի տրտմություն ճշմարիտ Հայոց:

Ո՞հ, տա՛ր երկինք ու ամեն ատեն և ամեն տեղ արդարությունն իր հաբազատ հաղթությունը ցույց տաւ ընդդէմ կույր բռնավորության և խավար տգիտության, տգետ և ազգատյացները ծաղու ծանակ ընելով և Ազգասեր ու ճշմարիտ հայերը հաղթող հանդիսացնելով հոգուտ հասարակաց բարվույն (ընդգծումներն իմն են — Գ. Գ.):

Այսպիսով, «Մեղու»-ի այդ երկու երեք տարեթվերի մեջ կատարած ոչ-լրիվ ու ոչ-բազմակողմանի մեր էքսկուրսիայի այս տվյալներից դժվար չէ հետևցնել, թե այդ պամֆլետի և՛ տակտիկական մաների առանձնահատկությունները, և՛ նույնիսկ նրա առանձին մոմենտները բացարձակորեն արձագանքում են Սվաճյանի նախորդ համապատասխան հողավածների ձևին ու բովանդակությանը, — շարունակում են դրանց կոնցեպցիան՝ իր բոլոր մանրամասնություններով և հասցնում՝ դրանց զարգացման բարձրակետին:

Խնդրո առարկա պամֆլետի՝ Սվաճյանի գրչին պատկանելու օգտին վճռական ու անառարկելի փաստ ենք համարում և այն վկայությունը, որ տալիս է հենց ինքը՝ Սվաճյանը:

Բանն այն է, որ այդ պամֆլետի հրատարակությունից ուղիղ մի ամիս հինգ օր առաջ, նույն թվի «Մեղու»-ի հոկտեմբերի 31-ի համարի 17-րդ էջում «Մեղու»-ին վերաշարունակությունը՝ խորագրով իր հողավածում, իրեն՝ մանավանդ իր երկրորդ էության՝ Մեչուխեչային հատուկ կես լուրջ, կես կատակ ուճով, Սվաճյանը հարում է. «Մեչուխեչային սպառնալիքը բավական չէր՝ մեյ մ՞ալ սետիրսիզ խահվեի հեզվեհին տետրակ մը գրեր զրկեր է՝ ան ալ կպահանջե, որ իր գրածն ալ «Մեղու»-ին հավելված ըլլա... Անո՛ր ալ խաթրը չպիտի կոտրվի...»:

Թե՛ Մեղուխեչայի այդ ականարկությունը վերաբերում է քննարկվող մեր այս պամֆլետին, այդ մասին վկայում է ոչ միայն այն հանգամանքը, որ այդ հայտարարությունից հետո դա «Մեղու»-ի առաջին հավելվածն է, այլև այն, որ նույն այդ հավելվածի մեջ հեղինակը դիտավորյալ մատնում է իր իսկությունը՝ նույնանալով մեկ ամիս հինգ օր առաջ ականարկած այդ ծածկանվան հետ. «Դուն ալ անոր խոսքը կըլլա, — կարդում ենք պամֆլետում, — «տրամաբանություն վասն մարդո եղև և ոչ մարդ վասն տրամաբանության. ինչ կուզես նե ըլլա. «միթե պահապա՞ն իցեմ տրամաբանության»։ «Չէ, — շարունակում է պամֆլետի հեղինակը, — մենք զանի չենք ձգեր. պայադի ճեզվեճի մ' ըլլալով գրոց աշակերտ չենք նե ալ գործածածնիս ճոն Սթյուարթ Միլլի տրամաբանությունն է. Այվաղովսկիի բանին կուգա նե՛ կարդա զանի. մեր բանին կուգա և շատ ալ գոհ ենք» և այլն, և այլն։

Ուշագրավ է նախ այն, որ պամֆլետին մեկ ամիս հինգ օրով նախորդող Ուետիրսիզ ճեզվեճին իրեն հանդես է բերում մի այնպիսի վերնագրի տակ, — «Մեղու»-ին վերաշարունակությունը» — որ միաժամանակ մատնում է պամֆլետի գրության ժամանակն ու պարագաները։ Տարակույս չի մնում, որ այդ հայտարարությանը նախորդող օրերին «Մեղու»-ն նորից խափանված է եղել իր փեթակում, և, ինչպես միշտ անում էր նման դեպքերում, որոշել է հանդես գալ մի հավելվածով, որն ինչպես պարզվեց, իր մարմնացումը գտել է խնդրո առարկա պամֆլետի մեջ¹։

Ի տարբերություն նախորդ հավելվածների՝ պամֆլետը լույս էր ընծայվել ոչ թե «Մեղու»-ի կախակայման ժամանակաշրջանում, այլ դրա վերահրատարակվելուց առնվազն մեկ-մեկուկես ամիս հետո։ Սա ինքնին վկայում է այն մասին, որ պամֆլետը երկար ժամանակ եղել է Սվաճյանի մտահոգության առարկա, որ նա այն գրել է հատուկ նպատակով և հատուկ առիթով — այլապես «Ուետիրսիզ ճեզվեճի» արդեն պատրաստի այդ «տեսրակ»-ը նա հրատարակած կլիներ «Մեղու»-ի խափանման օրերին, և չէր սպասի դեկտեմբերի 5-ին։

Այնուհետև, պետք է ընդգծել այն հանգամանքը, որ հայտարարության և պամֆլետի մեջ հեղինակների կեղծանունների համընկնումը — ընդգծված՝ սրամտության ճանապարհով — փորձում է ստեղծել այնպիսի վիճակ, որ և՛ շփոթություն չառաջացնի հեղինակի ինքնության վերաբերյալ, և՛ պամֆլետը անց կենա, հոգ չէ թե «Մեղու»-ի պիտակի տակ, բայց և այնպես առանց Սվաճյանի ուղղակի ստորագրության։ Հասկանալի է, որ Նալբանդյանի հանրահայտ «մտեմագույնի» կողմից գրված լինելու հանգամանքը, եթե իմացվեր, բնականաբար, կթուլացներ պամֆլետի ազդեցությունը, իսկ սովթանիղմի աչրին՝ Նալբանդյանի՝ նման պաշտպանության համար կդառնար առավել փուշ։ Երկու այս նկատառումներով էլ՝ պամֆլետը պետք է լույս տեսներ ամբողջ «Մեղու»-ի հեղինակության անունից, առանց Սվաճյանի ուղղակի ստորագրության, Սվաճյանի մասին հնարավոր, ծածուկ ու սրամիտ ականարկությամբ միայն։

Բոլոր այս մոմենտները կասկած չեն թողնում այն մասին, որ «Կտոր մը այվազովսկիաբանություն» պամֆլետը մաս է կազմում՝ Հարություն Գրիգորի Սվաճյանի կուլտուրական ժառանգության։

¹ Սվաճյանը բավականաչափ ժամանակ էր ունեցել աշխատելու՝ պամֆլետի տվյալների հավաքման վրա, դրա շարադրման մեջ րժախնդրություն ցուցաբերելու և ոճն ու լեզուն հատկապես մշակելու վրա։

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պետական Մատենադարանի արխիվի անթվական վավերագրերի մեջ (թղթապանակ № 1059) պահվում է «Այվազով սկիարանության» մեկ ձեռագիրը, որ «Մեղու»-ի՝ Մատենադարանում գտնվող կոմպլեկտի հետ այնտեղ բերված է եղել էջմիածնից, ընդ որում ոչ թե Սինոդի գործերի կամ կաթողիկոսական դիվանի թղթերի մեջ, այլ որպես մեկը այն վավերագրերից, որոնք կուտակվում էին էջմիածնում մասնավոր մարդկանց պատկանած հավաքածոներից, և որը մասամբ հիմք էր տվել ընկ. Ա. Հովհաննիսյանին՝ «Տեղեկագրի» էջերից 1950 թ. հանգես գալու «Միքայել Նալբանդյանի նորահայտ պամֆլետը» հոդվածով:

Մանրամասնորեն ուսումնասիրելով խնդրո առարկա պամֆլետի և՛ «Մեղու»-ի տպագիրը, և՛ Մատենադարանի ձեռագիրը, և բաղդատելով դրանք միմյանց հետ, եկել ենք այն եզրակացության, որ և՛ տպագրում, և՛ ձեռագրում պակասում է պամֆլետի անհրաժեշտ շարունակությունը, և այդ իսկ պատճառով՝ միևնույն կետում վերջ գտնող ձեռագիրը չի կարող այլ բան ներկայացնել իրենից, քան պարզ արտագրությունը տպագիր սկզբնագրի:

Ընկ. Ա. Հովհաննիսյանը ինքն էլ է խոստովանվում, թե ձեռագիրը Նալբանդյանի գրչին չի պատկանում, իսկ հակառակ դրան՝ պնդելու համար ձեռագրի վավերականության և օրիգինալության մասին, նա ստիպված է Լեւրադեւու, թե դա եղած պետք է լինի ուրիշների ձեռքով բազմազգրված և տարածված անլեզալ մի պամֆլետ, որ Նալբանդյանը գրած պետք է լինի բանտում: Սակայն դրանով հարցը չի փակվում: Հասկանալի է, որ այդ Լեւրադեւուքունը կարոտ է հավելյալ ենթադրությունների, բացատրելու համար, թե ինչպե՞ս և ո՞ւմ կողմից արտագրվել ու բազմացվել է այն, ո՞ւմ ձեռագիրը կարող է լինել սովյալ օրինակը, ի՞նչպես ընկած պետք է լինի էջմիածնի վերոհիշյալ բաժինը և այլն, և այլն:

Ընկ. Հովհաննիսյանը գտնում է, որ Նալբանդյանը ամեն կերպ մտահոգված էր, որ ցարական կամ ներքին որևէ ռեակցիոնների ձեռքն ընկնելիս՝ գրությունը շմատներ իր հեղինակի արևելահայ լինելու հանգամանքը: Ապա ինչպե՞ս հաշտեցնել դրա հետ այն փաստը, որ ձեռագրի թուղթը ռուսական դրոշմ ունի, ձեռագրում որոշ արևելահայ բառային ձևեր կան:

Այնուհետև, ինչպես նկատեցինք, հեղինակը ինքն էլ է խոստովանվում, որ պամֆլետի լեզուն, ոճն ու երգիծաբանական ժանրը Սվաճյանին են մատնում: Եթե այդ այդպես է, ապա ինչպես հնարավոր է ենթադրել, որ Նալբանդյանը բացառաբար իր այդ պամֆլետը — այն էլ բանտում՝ հոգեկան ծանր դրության մեջ — գրել է իրեն անհասարակ խորթ այն զվարթ, հումորային, սատիրիկ ոճով, որն այդ տարիներին, — Պարոնյանից առաջ, — հատուկ էր միայն ու միայն Սվաճյանին:

Մեջ ենք բերում պամֆլետի ամենավերջին խոսքերը. «Այվազով սկիե՛ն զատ,— կարդում ենք այնտեղ,— ամեն մարդ այս տողերը կարդալով՝ մարդկային բանականության ընդաբույս տրամաբանությամբ սանկ պիտի խոսի» և վերջ: Իսկ այդ «սանկ»-ը մնում է օդից առկախ, բաժանված՝ իր հետևից լեզվական-տրամաբանությամբ ենթադրվող մտքերից: Մի՞թե կարող է արևմրտահայերենի մեջ որևէ միտք — կամ թեկուզ նախադասություն — «սանկ»-ով վերջանալ: Հարցը տարբեր կլիներ, անշուշտ, եթե դրա փոխարեն լիներ (ա)-սանկ, որ կարող էր ակնարկել նաև նախորդ մտքերը կամ նախադասությունը:

Թե ի նշ է եղել «սանկ»-ին շեղվական անխուսափելիության մը հաջորդած այդ միտքը, և թե «սանկ»-ից հետո ինչքան է երկարում դեռ պամֆլետը — այդ մեզ մնում է անհայտ: Տվյալ դեպքում էականն այն է, որ շեղվականորեն պամֆլետն այդտեղ չի կարող վերջ գտնել:

Մեր այս ենթադրության օգտին է վկայում և այն հանգամանքը, որ պամֆլետի վերջին վերջակետը դրվել է էջի այն աստիճան ծայրամասում, որ չի կարելի կողքին մի տառ կամ կետ իսկ ավելացնել, ներքևում մի գիծ իսկ քաշել: Այլ կերպ ասած՝ պամֆլետը չի ավարտվել նաև տեխնիկապես:

Եվ վերջապես, հավելվածում պակասում են տպագրական-պայմանական բոլոր անխուսափելի մոմենտները:

«Մեղու»-ն, իր այդ հավելվածի իսկ հրատարակության ամսվա համարում, հրատարակել է կառավարական պաշտոնական օրենքը, որի «ընդհանուր տրամադրությունք» բաժնի 4-րդ հոդվածում ասվում էր.

«...Լրագրին ամեն օրինակներուն ներքև տիրոջը կամ պատասխանատու տնօրենին տպյալ ստորագրությունը պիտի գտնվի»:

Իսկ նույն օրենքի 7-րդ հոդվածում ասվում էր. «Ամեն մեկ թերթի կամ տետրակի՝ ներքև ստորագրություն ղեկավար պատասխանատու պիտի ըլլա մեջը գտնված այն ամեն հոդվածներուն ու խոսքերուն, որոց հեղինակը թեև ուրիշ է, բայց ստորագրություն չունի: Իսկ եթե դատաստանի ներքև ինկած հոդված մը կամ խոսք մը ուրիշն ստորագրյալ է, թերթին կամ տետրակին ներքև ստորագրություն ունեցողն ալ այն հոդվածին հեղինակին կամ հեղինակներուն հետ իրրև մեղսակից պիտի դատվի»:

Աչքից անցկացնելով «Մեղու»-ի նախորդ և հաջորդ բոլոր հավելվածները, հաստատում ենք, որ բոլոր դեպքերում «Մեղու»-ն հարգել է օրենքի վերոհիշյալ տրամադրությունները, միայն այն վերապահությամբ, որ երբեմն, երբ հավելվածի էջերում շարունակված է եղել «Մեղու»-ի նախորդ համարի համարակալումը, այլ կերպ ասած՝ երբ հավելվածը լույս է տեսել նախորդող համարին կից և ոչ թե առանձին — նա բավարարվել է համարի տակ գնելով իր ստորագրությունը, այդ դեպքերում իսկ անպայմանորեն հավելվածի վերջում նշելով տպարանի անունն ու հասցեն և այն ապահովագրող հանկերգը, թե «հանդիսիս պարունակությանը պատասխանատու չէ տպարանը»:

Արդ, միակ հավելվածը, որ նախորդ համարից բոլորովին անջատ՝ առանձին «տետրակով» լույս տեսած լինելով հանդերձ, «Մեղու»-ի ամբողջ պրակտիկայում, չի հարգում պետական-պաշտոնական այդ օրենքը, հանդիսանում է մեր քննարկմանը ենթակա «Կտոր մը այվազով սկիաբանություն» պամֆլետը: Տարակույս չկա, որ եթե պամֆլետը տվյալ կետում ավարտված լիներ, ըստ օրենքի այնտեղ կա՛մ Սվաճյանը ստորագրած պիտի լիներ որպես թերթի պատասխանատու տեր և տնօրեն, և կա՛մ Ա. Հայկունին — ինչպես անմիջական նախորդ հավելվածում — որպես թերթի գործակալ, և վերջապես՝ բոլոր դեպքերում, ամենավերջում նշված պիտի լիներ տպարանի անունն ու հասցեն, նրա ինքնապահովագրման հանկերգային հայտարարությունը:

¹ Պարզվում է, որ վերոհիշյալ օրենքը տարածվում էր ոչ միայն լրագրերի կամ պարբերաթերթերի, այլև դրանց հրատարակած «տետրակներին» — ինչպես Սեփրսիզ կամ պայաղի ճեզվեճիճ իր հայաարարությամբ լուսարանում է — հավելվածների վրա:

Պամֆլետի վերջում՝ ահա այս բոլորի իսպառ բացակայությունն էլ իր հերթին, ավելանալով վերևում նշած տեխնիկական-լեզվական համապատասխան փաստերին, ոչ մի տարակույս չի թողնում այն մասին, որ մեր տրամադրության տակ գտնվող օրինակում պակասում է պամֆլետի շարունակությունը, եթե ոչ մեր կոմպլեկտի պակասավոր լինելու պատճառով, ապա անպայման իր ժամանակի ցենզուրական ճնշումների հետևանքով:

Այսքանն էլ բավական ենք համարում պնդելու, որ խնդրո առարկա այդ ձեռագիրը, և կամ նույն այդ ծավալը ունեցող որևէ ուրիշ մի ձեռագիր, — չի կարող հիմք կամ սկզբնագիր հանդիսացած լինել «Մեղու»-ում տպագրված այդ պամֆլետի համար, և բոլոր դեպքերում, — ընդհանրապես, կարող է լինել սոսկ այս կամ այն պատահական — ամենայն հավանականությամբ արևելահայ — ընթերցողի կողմից արտագրություն՝ «Մեղու»-ի սկզբնագրի, որի օրիգինալ ձեռագիրը մեզ չի հասել:

Այդ ձեռագրի, որպես օրիգինալ սկզբնագիր, հրապարակից իսպառ վերանալովը, ինքնըստինքյան վերանում են և բոլոր այն ենթադրությունները, որոնց համար հիմք է ծառայել վերոհիշյալ ձեռագիրը:

Է՛լ շենք խոսում այն մասին, թե նման թյուրիմացությունը — պամֆլետի իսկ տվյալների լույսի տակ — անախորժ դրության էր մատնում հենց իրեն՝ Նալբանդյանին, որն իբր իր ձեռքով իրեն հակադրել էր Այվազովսկուն՝ ի վերջո հայտարարելու, թե Այվազովսկին ոչնչություն է, իսկ ինքը՝ Նալբանդյանը՝ ամեն ինչ, Այվազովսկին հայ ժողովրդի դահիճն է, իսկ ինքը՝ Նալբանդյանը՝ փրկիչը, նա՝ տկար ու անզոր է, իսկ ինքը՝ ամենազոր, և այլն, որ, լինելով հանդերձ ամբողջ հայ ժողովրդի իր ժամանակի դեմոկրատիայի ամենակենտրոնական առաջնորդը — պետրոպավլովյան ամենաճակատագրական իր օրերին, — Նալբանդյանը իբր չի ունեցել իրեն համար կուրծք տվող որևէ մի հարազատ, և իբր ստիպված է եղել փաստորեն մեն մենակ դիմագրավելու վերահաս վտանգը, մին մենակ պայքարելու դրա դեմ՝ իր իսկ ձեռքով գրելով դատական ինքնապաշտպանության իր ճառը՝ «Կտոր մը այվազովսկիաբանություն»-ը:

Այսպիսով, մեր կարծիքով, «Կտոր մը այվազովսկիաբանություն»-ը անվիճելիորեն պատկանում է Հարություն Սվաճյանի գրչին: Եթե ճիշտ է այդ օրերին Սվաճյանի՝ Նալբանդյանին անձնապես այցելած լինելու ենթադրությունը, Սվաճյանը այն գրած կարող է լինել Նալբանդյանի խորհրդակցությամբ ճիշտ այնպես, ինչպես վերջինս իր «Ազգային թշվառությունը» Սվաճյանի խորհրդակցությամբ:

Համենայն դեպս՝ «Կտոր մը այվազովսկիաբանություն»-ը վերագրվելով իր իսկական հեղինակին, դալիս է առավել հիմնավորելու՝ իր հեղինակի հայացքների ուղղություն-դեմոկրատականությունը, առավել ընդգծելու՝ Նալբանդյան-Սվաճյան սերտ համագործակցությունն ու, դրանով իսկ, վեր հանելու պայծառ կերպարը՝ Հարություն Սվաճյանի: